

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա

Թեմա՝ Սփյուռքիայ արվեստ

Հետազոտող՝ Դավթյան Գայանե

Ղեկավար՝ Լ. Իսկոյան/մանկ. գ.թ., դոցենտ/

Բովանդակություն

Ներածություն.....	3
ԳԼՈՒԽ 1.Սփյուռքահայ նկարիչներ.....	6
Եզրակացություն.....	14
Օգտագործված գրականության ցանկ.....	24
Դասի պլան.....	19

Ներածություն

Միջուռքահայ կերպարվեստի անցած ուղին վկայում է սիյուռքհայրենիք հոգևոր անքակտելի կապը, որը կենսական հզոր խթան է օտարության մեջ ստեղծագործող հայ արվեստագետների դ համար: Այդ առումով սիյուռքահայ կերպարվեստը տարանջատ չէ մայր մշակույթի ընդհանուր զարգացումից և կազմում է նրա ծանրակշիռ մի օղակը:

Ֆրանսահայ կերպարվեստի սկզբնավորումը սերտորեն առնչվում է նատյուրմորտիստ Ջ. Ջաքարյանի անվան հետ, որը առավելապես ներշնչվել է 17-րդ դարում հոլանդ, նատյուրմորտիստներից և հատկապես 18-րդ դարում ֆրանսիացի գեղանկարիչ Ժ. Բ. Ս. Շարդենից: Ջաքարյանի կտավները հատկանշվում են կուռ կառուցված Ա. Շապցանյան «Նորմանդացի ձկնորսները» (1898, ՀՊՊ, կրեան) Ջ. Ջաքարյան. «Նատյուրմորտ:

Դեղձեր» (1900-ական թվականներին, ՀՊՊ, Երևան) Է. Շահին. Լուիզ Ֆրանսի դիմանկարը (1903, ՀՊՊ, Երևան) Տ. Պոլատ. «Ավել վաճառողը» քով, նյութի խոր զգացողությամբ և գեղանկարչական առինքնող մթնոլորտ ստեղծող լուսային խաղերով: Նրա գործերից շատերը տեղ են գտել ֆրանսիական թանգարաններում:

1882 թվականին և 1900 թվականին միջազգային ցուցահանդեսներում արժանացել է ոսկե մեդալի: Ֆրանսիական կերպարվեստում լայն ճանաչում է գտել օֆորտի նշանավոր վարպետ Է. Շահինը: Շուրջ հազար գործի հեղինակ Շահինի «Մետրոյի շինարարությունը» հայտնի նկարաշարում (1900-1910) ցայտուն դրսևորում է գտել նկարչի դեմոկրատական աշխարհայացքը:

Նա ստեղծել է կրկեսի, փարիզյան տոնախմբությունների նկարաշարեր, գործագուրկների ու դերասանների դիմանկարներ, կատարել գրքի

նկարագարողումներ: Նկարչի արվեստում զգալի տեղ է գրավում հայկական թեմատիկան («Ալևոր հայր», «Պողոս Նուբար», «Զարմիկյան» և այլն): 1928 թվականին Շահինը հեռակա ընտրվել է Խորհրդային Հայաստանի կերպարվեստագետների միության պատվավոր անդամ: Շահինի կողքին օֆորտի մյուս նշանավոր վարպետը Տ. Պոլատն է (Ա. Ֆրանսի «Սենտ Քլեոի ջրհորը», 1904, Լաֆոնտենի «Առակների» ակադեմիական հրատարակության, 1930, և այլ նկարագարողումներ, դիմանկարներ, կենցաղային պատկերներ):

Ֆրանսահայ բնանկարիչներ Վ. Մախոխյանի, Ա. Շապանյանի, Կարապետ (Շարլ) Ադամյանի, Հ. Ալխազյանի կտավները օժտված են երփնագրային նուրբ վարպետությամբ ու կենդանի, հուզական շնչով: Հետևելով Հ. Այվազովսկուն, այս նկարիչները խոշոր դեր են ունեցել հայկական ծովանկարչության զարգացման ասպարեզում:

Մոսկվայում և Փարիզում է ձևավորվել Հ. Դյուրջյանի արվեստը: Նա միանգամից հայտնի է դարձել 1910-ական թվականներին դասական ոճով կերտած Մ. Դորկու, Ս. Ռախմանինովի, Ի. Դոբրովեյնի, Ա. Չոպանյանի կիսանդրիներով: Նույն շրջանի նրա «Լև Տոլստոյը» հետագայում դրվել է Փարիզում, գրողի անունը կրող պուրակում: Դյուրջյանը ստեղծել է մի շարք մոնումենտալ, ներքին ուժով հատկանշվող արձաններ՝ «Հաղթանակ» (1923), «Պարուհիներ» (1929), «Սալոմե» (1925–1926) և այլն:

Քանդակագործի մահից հետո, 1959 թվականին, նրա ստվար ժառանգության մեծ մասը հանգրվանել է հայրենիքում: Քանդակագործուհի, ֆրանսիացի դիմադրության շարժման մասնակից Դ. Կամսարականը ստեղծել է դիմաքանդակներ («Պողոս Նուբար», «Աաշա Փիթոն», «Ռոժե Վայան» ևն), հայ

մտավորականների հուշարձանը Բանյոյում (Փարիզ), պատերազմի դեմ ուղղված
դրամատիկական Տ. Եսայան. «Ս. Ժեննի Փողոցը Փարիզում»:

ԳԼՈՒԽ 1. Սփյուռքահայ նկարիչներ

Էդգար Շահին

Էդգար Պետրոսի Շահին (ֆր.՝ Edgar Chahine, հոկտեմբերի 31, 1874[1][2], Վիեննա, Ավստրո-Հունգարիա - մարտի 18, 1947[1][2], Փարիզ, Ֆրանսիա), հայ նկարիչ, ֆրանսիական Պատվո լեգեոնի ասպետ և շքանշանակիր, Հայաստանի նկարիչների միության պատվավոր անդամ 1928 թ, Վենետիկի պատվավոր քաղաքացի: Շահինը փորագրանկարչության խոշորագույն վարպետ է, նրա ստեղծագործությունը հայ մշակույթի և 20-րդ դարի սկզբի եվրոպական կերպարվեստի նշանակալի երևույթներից է:

Ծնվել է Վիեննայում 1874 թվականին: Սովորել է Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանում: 1896 թվականին մեկնել է Փարիզ: Հաճախել է Ժյուլիանի ակադեմիան Ժ. Պ. Լորանսի ու Բ. Կոստանի մոտ[3]:

1896 թվականից «Մարդկային թշվառություն» ընդհանուր խորագիրը կրող գեղանկարչական աշխատանքներով՝ «Մուրացկանը», 1896, «Փողոցի մի անկյուն», 1897, «Շնչահեղձը», 1898, «Անապաստանը», 1899, «Փողոց Մոնմարտրում», մասնակցել է ցուցահանդեսների

1899 նկարիչն ստեղծագործել է փորագրության բնագավառում. առաջին իսկ գործերով արժանացել է ճանաչման

1900 թվականին Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում Շահինը արժանացել է ոսկե մեդալի, ընտրվել Լոնդոնի գեղարվեստի թագավորական ընկերության, փորագրողների միության, Հռոմի իտալական գեղարվեստի ազգային ընկերության անդամ: 1900-ական թվականների փորագրությունները («Աղբահաններ», «Պետրոս

Շահին», «Անատոլ Ֆրանս», երեքն էլ՝ 1900, «Լաթահավաք կինը», 1901, «Զբոսանք», «Հայկական երեկոյի ծրագիր», երկուսն էլ՝ 1902, «Ջեմմա», «Լիլի», «Լուիզ Ֆրանս», «Բեռնակառք», «Գործագուրկը», հինգն էլ՝ 1903, «Թխահերն ու շիկահերը», 1907, «Ընկած ձին», 1910) առանձնանում են գոյության պայքարի, թշվառության ու պերճանքի հավաստի պատկերմամբ

1901 թվականին մասնակցել է Վենետիկի բիենալեին

1903 թվականին Վենետիկի համաշխարհային ցուցահանդեսում Շահինի 20 փորագրություններն արժանացել են ոսկե Մեծ մրցանակի, ֆրանսիական կառավարությունը նրան շնորհել է Պատվո լեգեոնի ասպետի աստիճան և շքանշան

1905 թվականին, նաև հետագայում, Շահինը ճանապարհորդել է Իտալիայում, ստեղծել «Իտալական տպավորություններ» շարքը («Կուլոնի աբբայարանը», 1915, «Սուրբ Պետրոսի ջրանցքը», «Ոգիների տունը», «Սուրբ Մարկոսի հրապարակը», «Ի՛նչ գեղեցիկ հայկական քիթ», 1921, «Հմայիչ կինը», «Հրաշալի երեխան», «Ֆրանչեսկոնի», երեքն էլ՝ 1922-1925 թթ.)

Շահինն իր գործերում կիրառել է փորագրության գրեթե բոլոր եղանակները (օֆորտ, փափուկ լաք, աքվատինտա), սակայն նախընտրել է չոր ասեղի տեխնիկան, որը հասցրել է կատարելության: Նա Վենետիկի մեծ նկարիչներից էր և պատվավոր քաղաքացի: 1930 թվականին ուղևորվել է Բրետանի և Լա Մանշի ափեր, ստեղծել բացառիկ գեղեցկության բնանկարների շարք («Կրաուզիկ», «Ձկնորսական նավակներ», «Փոքրիկ լողափ» և այլն): Շահինի՝ հայ իրականությանը նվիրված տասնյակ գործերից ուշագրավ են «Ալևոր հայը», Պողոս Նուբարի, Տիկին Զարմիկյանի, օրիորդ Երամի և ուրիշների դիմանկարները: Գրիգոր Զոհրապի առաջարկությամբ ստեղծել է մի օֆորտ, որտեղ պատկերել է սպանդից փրկված հայ որբերի. երկրորդ պլանում Անիի Հովվի եկեղեցին է:

Շահինն ստեղծագործել է նաև գրքի նկարազարդման բնագավառում. ձևավորել է Անատոլ Ֆրանսի «Կատակերգական պատմություն», Գուստավ Ֆլոբերի «Նոյեմբեր», Գաբրիել Մուրեի «Փարիզի տոնավաճառի մարդիկ» (140 օֆորտ), Մորիս Բարեսի «Վենետիկի մահը», Վերգիլիուսի «Մշակականք» (Տիգրան Պոլատի ու 15 այլ նկարիչների հետ) և այլ գրքեր: Շահինը բազմաթիվ ընկերությունների (Հռոմի իտալական գեղարվեստի ազգային, Լոնդոնի գեղարվեստի թագավորական և այլն) և միությունների (Փորագրողների և այլն) անդամ էր: 1928 թվականին հեռակա ընտրվել է Հայաստանի կերպարվեստագետների միության պատվավոր անդամ: 1936 թվականին՝ Երևանում, Թիֆլիսում, 1940 թվականին՝ Լենինգրադի Էրմիտաժ թանգարանում բացվել են նրա փորագրությունների ցուցահանդեսները. շուրջ 160 գործ նվիրել է Հայաստանին: 1974, 1994 և 2004 թթ. Երևանում կազմակերպել են Շահինի ծննդյան 100, 120 և 130-ամյակներին նվիրված ցուցահանդեսներ:

Գործերը պահվում են Փարիզի ազգային գրադարանում, Վենետիկի քաղաքային թանգարանում, Հայաստանի ազգային պատկերասրահում (300-ից ավելի), Էրմիտաժում, Մոսկվայի Պուշկինի անվան կերպարվեստի և եվրոպական երկրների այլ թանգարաններում:

1995 թվականին Ֆրանսիայի Ժիզոյ քաղաքից (Նորմանդիա) ոչ հեռու, Սեն Միշելում, բացվել է Շահինի թանգարանը:

Շահինն արժանացել է Ոսկե մեդալի (1900 թ., Փարիզ) և Ոսկե մեծ մրցանակի (1903 թ., Վենետիկ), Ֆրանսիայի Պատվո լեգեոնի ասպետի աստիճանի և շքանշանի:

Մեջբերումներ Էդգար Շահինի մասին

«Շահինը ոչ միայն նրբաճաշակ արվեստագետ է, այլև նրբազգաց հոգեբան, պատմագետ»:

Պ.

Օրբինի

Իտալացի արվեստաբան

«Այն հարստությունը, որ պարզևում է մեզ Շահինը, պարտավորեցնում է ավելի գնահատել նրա տաղանդի հզորությունն ու հմայքը»:

Մաքս

Ռոժե

Ֆրանսիացի արվեստաբան

«Էդգար Շահին. ահա մեր կերպարվեստի նորահայտ փառքերից: Դիտեցեք նրա օֆորտները. մի օր «Պառավն» էք նախընտրելու, հաջորդ օրը՝ «Շատո Ռուժը», և այսպես շարունակ: Այս ամենի համար միայն մեկ բառ կա՝ «ապշեցուցիչ»:

Շառլ

Շենյոլ

Ֆրանսիացի արվեստաբան

Ժան Գառզու,

Գառզու (Ժան Գառզու, նաև Զուլումյան Գառնիկ ֆրանսահայ նշանավոր նկարիչ, բեմանկարիչ, ֆիգուրատիվ արվեստի վարպետ:

Կենսագրություն

Ծնվել է 1907 թվականի հունվարի 1-ին, Հալեպում, (Սիրիա), վախճանվել՝ Փարիզում, 2000 թվականի օգոստոսի 12-ին: 1918 թվականին ընտանիքի հետ տեղափոխվել է Եգիպտոս: Կրթություն է ստացել Կահիրեի Գալուստյան վարժարանում, ապա 1924 թվականին կրթաթոշակի շնորհիվ ուսումը շարունակել է Փարիզում: 1929 թվականին ավարտել է Փարիզի ճարտարապետական դպրոցը, միաժամանակ հաճախել է Մոնպառնասի Գրան Շոմիեր ակադեմիան: 1929 թվականին ֆրանսիացի նկարիչների ցուցահանդեսում նրա

«Ալքազարի հին պարտեզները» նկարը արժանացել է մրցանակի: 1929 թվականից սկսած մասնակցել է Փարիզի հայ արվեստագետների «Անի» միության ցուցահանդեսներին: 1938 թվականին ստացել է Սուրբ Ֆրանսուա Ասիզեցու անվան մրցանակ: Նույն թվականին բացել է իր առաջին անհատական ցուցահանդեսը: 1930-1940-ական թվականներին Գառզուի գործերը ցուցադրվել են «Գերանկախների», «Անկախների» և «Աշնանային» սալոններում:

Գառզուն Հայաստանի ազգային պատկերասրահին և Ժամանակակից արվեստի թանգարանին է նվիրել 400, իսկ ի նպաստ Սպիտակի երկրաշարժից տուժած արվեստագետների՝ 50 գրաֆիկական գործեր:

Գառզուն Պատվո լեգեոնի շքանշանի ասպետ էր. 1979 թվականին դարձել է Ֆրանսիայի գեղարվեստի ակադեմիայի անդամ:

Նկարչական ոճ

Գառզուն հետևել է արվեստի նորագույն միտումներին, ստեղծել ինքնատիպ ոճի բնանկարներ, դիմանկարներ, նատյուրմորտներ: Այս շրջանի գործերին բնորոշ են կարմիր, կանաչ, կապույտ հյութեղ մակերեսներն ու մութ ֆոները:

Չնայած Գառզուի արվեստում դոմինանտությունը պատկանում է ուրվագծին՝ գույնը նրա համար կարևոր արտահայտչամիջոց է: Նրա հորինվածքների մեծ մասը հիմնված է գունային հարթությունների (արտացոլում են երկինքը, հողը, ծովը) և ցանցահյուս նախշերի հակադրության վրա: Լիտոգրաֆիկական շարքերում փոփոխություն մտցնելով գունային համակարգում՝ նկարիչը հասնում է միևնույն հորինվածքային մոտիվի տարբեր կերպարային հնչեղությանը:

1950-ական թվականներից սկսած, Գառզուն մեծ համբավի է արժանացել, երբ ի հայտ են եկել նկարչի մարդասիրական աշխարհայացքը, հակապատերզամական տրամադրությունները խորհրդանշող պատկերները՝ լքված ու ավերված պալատներ, նավահանգիստներ, երկաթուղային կայարաններ, որտեղ արտացոլված է

ամայության և տազնապի զգացողությունը: Գառզուի գործերում իրականությունը ասես կերպարանավորվել, վերածվել է եռանդագին ու նրբագեղ գծերի հյուսվածքի՝ տեսիլ-աշխարհներ: Նրա գծանկարի կարևոր խնդիրներից է՝ արարել ինչ-որ տիեզերական տազնապի և դրախտային զգացման խորհրդավոր մթնոլորտ: Գիծը դարձել է գառզուական գեղանկարչության գլխավոր արտահայտչամիջոց:

Հանրահայտ խորհրդանշական պատկերը և գործեր՝

«Երազների ծովախորշը» (1951)

«Վենետիկ» (1953)

«Բուժիվալի լքված պալատը» (1954)

«Ապոկալիպսիս» (1957)

«Երկաթուղի» (1958),

«Երկրային դրախտ» (1959) նկարաշարեր

«Լքված նավահանգիստը» (1966) վիմագրություն

«Քաղաքը» (1972)

Գառզուն հայտնի է նաև որպես բեմանկարիչ: Ներկայացումներ է ձևավորել Փարիզի ազգային թատրոնում, Կոմեդի Ֆրանսեզում, Գրանդ օպերայում, Միլանի Լա Սկալայում, որոնցից ուշագրավ են Ժան Ֆիլիպ Ռամոյի «Բարեկիրթ հնդիկներ», Շառլ Ադանի «Ժիզել», Ժան Ռասինի «Գոթոդիա», Ժակ Օֆենբախի «Պերիկոլա» և այլ բեմադրություններ:

Օֆորտներով են նկարազարդված Անդրե Վերդեի «Գրաված սիրտ, դառը սեր»-ը (1965) և Արթուր Ռեմբոյի «Լուսախաղ» ժողովածուները: Վիմագիր նկարազարդումներ ունեն Էռնեստ Հեմինգուեյի «Հրաժեշտ գենքին» (1964), Ալբեր Բամյուի «Հուշատետր» (1965), Գոնկուր եղբայրների անունը կրող ակադեմիայի «Փարիզյան ակնարկներ»

(1965), Էդգար Պոյի «Կրկնակի սպանություն Սորգ փողոցում» (1969), Ժյուլ Վեռնի «Երկրից լուսին» (1970), Էժեն Իոնեսկոյի «Փշրտված թերթ», նաև Գառզուի «Ուղևորություն Հայաստան» (1974), «Շրջված քաղաքը», «Անդրանիկը և սուրբ լեռը», «Մահը լճափին», «Կանաչ ձեռքը», Ժուլիեն Կրազի «Արկովի պալատում» գրքերը:

Չնայած Գառզուն երբեք չի գործում որպես ճարտարապետ՝ այնուհանդերձ, ճարտարապետությունն իր անխախտ դրոշմն է թողնում իր ստեղծագործություններում. ճարտարապետությունը և ակադեմիական կրթությունը, անշուշտ, վճռական դեր են խաղում, որ Գառզուն հետագայում իր նկարաշարերում ներկայացնի գոթական, Վերածննդի, դասական, բարոկկո, նեոկլասիցիզմի («Վերսալ») ճարտարապետության բազմապիսի մոտիվներ՝ գծային, հեռանկարչական անթերի մեկնաբանումներով: Հետպատերազմյան տասնամյակների ընթացքում նկարիչը մեկը մյուսի ետևից ստեղծում է լիտոգրաֆիաներ, ջրաներկեր, օֆորտներ՝ Միջերկրածովի, Իլ-դե-Ֆրանսի, Բրետանիի, Վենետիկի, Փարիզի, Վերսալի, Տյուիլլրի, զանազան նավահանգստային քաղաքների բնապատկերներով: Այս աշխատանքներում ճշգրտորեն տրված է բնանկարային մոտիվը, սակայն Գառզուի ճշգրտությունը կրկնությունից հեռու է: Նկարիչը դեմ է բնության ուղղակի վերարտադրությանը, քանի որ հնարավոր չէ մրցել բնության հետ, բայց նա դեմ է նաև բնության իսպառ անտեսմանը, քանզի վերջինս նկարչին հույզեր տվող աղբյուր է:

Ցուցահանդեսներ

1939 թվականին Փարիզում կազմակերպվել է Գառզուի առաջին ցուցահանդեսը: Նկարիչը 3 անգամ արժանացել է Հոլմարկի մրցանակին (1943, 1951, 1953 թթ.):

1975 թվականին Փարիզի խոշորագույն ցուցահանդեսային սրահներից մեկում բացվել է Գառզուի վիմագրությունների և օֆորտների «Նոր հայացք» ծավալուն ցուցահանդեսը:

1966 թվականը Գառգուի կյանքում լինում է կարևոր և անմոռանալի: Նա իր տիկնոջ հետ առաջին անգամ այցելում է Հայաստան և հայրենիքում կազմակերպում «Ապոկալիպսիս», «Երկրային դրախտ», «Պրովանս», «Ամառային լույս» վիմագրական շարքերից կազմված անհատական ցուցահանդեսը:

Մեջբերումներ Գառգուից

Իբրև նկարիչ՝ կպատկանիմ ֆրանսիական արվեստին, սակայն իմ բոլոր գործերում մեջ անշուշտ հայ կմնամ: Չէ՞ որ մենք ամենքս մեր ժողովրդի բեկորներն ենք:

Ես գույնի տարբեր շրջաններ ունեմ: Այդպես է: Ատիկա ամենքին ի տես է դրված: Բայց հավատա, երբեք չեմ նստած ու մտածած, թե այսօր այս գույնով աշխատիմ, վաղը՝ այն գույնով: Ատոնք բոլորն ինքնաբերաբար են եկած, արվեստագործելու ընթացքում: Պարզապես ամեն մի շրջանում այդ ժամանակվա տրամադրություններում ու մտահղացումներում թելադրած գույնով եմ աշխատել:

Կրնամ ըսել, թե գույնեն առաջ գիծը կտեսնիմ: Ես ալ սկիզբները չեի անդրադարձած, որ գիծերով կնկարեմ: Բայց հետո գիծերն ավելի տիրապետող դարձան: Գիծերը, ամեն ինչ բաժանելու փոխարեն, կմիացնեն:

Եզրակացություն

20-րդ դարի սկզբից արտասահմանյան հայ արվեստի գլխավոր կենտրոնը դառնում է Ֆրանսիան, որտեղ հաստատվել և ստեղծագործել էր մի սովոր շարք տաղանդավոր հայ արվեստագետներ, որոնցից շատերը մասնագիտական կրթություն էին ստացել Փարիզի Ժյուլիան ակադեմիայում, ընդամին, ոմանք այստեղ էին եկել Վենետիկի միախարյանների Մուրատ Ռափայելյան վարժարանում նկարչական տարրական կրթություն ստանալուց հետո:

Ֆրանսահայ նկարիչներից առանձնապես նշելի տեղ էին զբաղեցնում շարդենյան տիպի նատյուրմորտների ինքնուս վարպետ Զաքար Զաքարյանը (1849-1923), որը նմանահանությունների օգնությամբ հավերժ է կատարելության, ծովանկարիչ և կենցաղանկարիչ Արսեն Շապանյանը (1864-1949), որի գործերում պատկերված մարդիկ ու բնությունը հաճախ տեղադրված էին ակտիվ լուսաօդային (բայց ոչ իմպրեսիոնիստական) միջավայրի մեջ:

Դարասկզբի խոշորագույն ծովանկարիչներից է Վարդան Մախոխյանը (1869-1937), որի ստեղծագործական վաղ փուլն անցել էր Դերմանիայում, ապա՝ Ֆրանսիայում և Միջերկրականի ափին: Նրա ռեալիստ, ծովապատկերները տրամադրության առումով ունեն ռոմանտիկական երանգավորում, իսկ որոշ դեպքերում էլ՝ հարևանցի աղերս սիմվոլիզմի հետ: Ինչպես Շապանյանը, այնպես էլ Մախոխյանը շփվել էին Հ. Այվազովսկու հետ և նրա արվեստից քաղել ներշնչանք ու ստեղծագործական ձևեր:

Հիմնականում բնանկարչությամբ էին զբաղվել նաև Հրանդ Ալյանաքը (1880-1938) և Հերան Շապանը (Շապանյան, 1888-1939): Ֆրանսահայ կերպարվեստում ուրույն տեղ էր զբաղեցնում կենցաղանկարիչ Լևոն Քյուրքճյանը (1872-1924), որի արվեստում ճշմարտացի արտացոլում էին գտել հասարակ մարդկանց կյանքն ու կերպարները: Լեհահայ դիմանկարիչ և կոմպոզիցիոնիստ Թեոդոր Աքսենտովիչի (1859-1938)

գեղարվեստ, գործունեությունը սկսվել էր Փարիզում, շարունակվել Կրակովում, ուր նա, սերտորեն կապված հայ համայնքին, վրձնել է հայկական թեմաներով կտավներ: 1910-1915 թվականի արտասահմանյան հայ արվեստի կենտրոններից էր դարձել նաև Եգիպտոսը, որտեղ ազգային գեղանկարչության առաջնեկներն էին կենցաղանկարիչ Երվանդ Դեմիրճյանը (1870-1938) և նրա աշակերտ, կերպարվեստի գրեթե բոլոր ժանրերում իր ձիրքը դրսևորած Տիրան Կարապետյանը (1882-1963): Վերոհիշյալ նկարիչներն իրենց ստեղծագործություններում առաջնորդվել էին գեղանկարչության դասական, մանավանդ 19-րդ դարի ռեալիզմի սկզբունքներով:

Միաժամանակ, բազմաթիվ նկարիչների ստեղծագործություններում դրսևորվել էին իմպրեսիոնիզմի և հաջորդող ուղղությունների գեղարվեստական մտածողությունն ու արտահայտչամիջոցները: Այդպիսին է հայկական գեղանկարչության խոշորագույն դեմքերից մեկը՝ Եղիշե Թադևուսը (1870-1936): Նրա ստեղծագործության մեջ ազգային թեմատիկայի մարմնավորումը սկզբնական շրջանում զգալիորեն կրել էր Վ. Սուրենյանցի ազդեցությունը: 1900 ական թվականներին նրա արվեստում տեղի էր ունեցել ակնհայտ շրջադարձ, մի շարք գործեր հակված էին դեկորատիվության, կատարված իլլյուստրատիվ ստանդարտական, պուանտիլիստական արտահայտչամիջոցներով, իրական պյուժենների, բնանկարների, դիմապատկերների հետ պատկերվել էին սիմվոլիստական տեսիլներ:

Այդուհանդերձ Թա Ա. Ֆեթվաճյան. «Անիի Փրկչի եկեղեցին» (1901, ՊՊ, Եբեան) Ս. Խաչատուրյան. «Գաղթականներ (ՀՊՊ, Երևան) դեկորատիվ ստեղծագործությունը միշտ մնում էր ռեալիստական: Իմպրեսիոնիզմին մոտ էին կանգնած Փարիզի գեղարվեստական շրջանակներում լայն ճանաչում վայելող բնանկարիչ և դիմանկարիչ Կարապետ (Շարլ) Ադամյանը (1872-1947) և Վրաստանում ստեղծագործող Վահրամ Դայֆեճյանը (1879-1960), որի մանրադիր ու հաճախ էտյուդային բնապատկերներում, նատյուրմորտներում ու կենցաղային դրվագներում շեշտակիորեն ակտիվացված է օդային միջավայրը: Բնանկարի վարպետ Ս.

Աղաջանյան. Ինքնանկար (1909, ՀՊՊ, Երևան) Հովհաննես Ալխազյանի (1881-1958) լուսեղ բնապատկերները հակված էին որոշ դեկորատիվության:

Դեկորատիվության հակումներն առավել ակնհայտ էին Սարգիս Խաչատուրյանի (1886-1947) գունեղ կտավներում, որոնցում դիմապատկերի ու բնապատկերի կողքին գեղարվեստ, ու փաստական լուրջ արժեք էին ներկայացնում ժողովրդական կյանքի, Մեծ եղեռնի ու գաղթի տեսարանները: Նախահեղափոխական ժամանակաշրջանի հայ արվեստում նկատելի տարածում էր գտել սիմվոլիզմը, որի ամենահետևողական կրողը դիմապատկերի ու նատյուրմորտի ակնառու վարպետ Հովսեփ Փուշմանն էր (1877-1966): 1910-ական թվականներին իր հաստոցային կտավներում, գրքի գրաֆիկայում ու թատերանկարչական ձևավորումներում սիմվոլիզմին զգալի տուրք էր տվել նաև Դեորգի ակուլովը (1884-1928):

Սիմվոլիստական փուլից սկսեց դրսևորվել Մարտիրոս Սարյանի (1880-1972) հզոր արվեստը, որի վաղ փուլի հեքիաթներ ու երազներ պատկերող ստեղծագործությունները հանգրվանել էին ռուս սիմվոլիստների «Դոլուբայա ռոզա» և «Ձուլտոյե ռունո» ցուցահանդեսներում: Այնուհետև, մի կողմից Մերձավոր Արևելք ու Հայաստան կատարած ուղևորություններից քաղած ճշմարտացի պատկերացումները, մյուս կողմից՝ ֆրանսիացիների նորագույն գեղանկարչությունը (հատկապես Դոգենի և Մատիսի) հանդիսացան այն հողը, որի վրա Սարյանը ձևավորեց իր 1910-ական թվականների և 1920 թվականի սկզբների սեփական և միանգամայն ինքնատիպ ոճը՝ հենված մաքուր ու լոկալ թույրերի հնչեղ հակադրությունների, առարկայական ձևերի ու մակերեսների լայն ընդհանրացումների, ինչպես նաև դեկորատիվ արտահայտչականության վրա: 1846 թվականին Կ. Պոլսում ստեղծված Արամյան կրկեսթատրոնում գործել էին աչքի ընկնող բեմանկարիչներ (Հ. Պաղտատյան, Հ. Հեքիմյան). թատրոնն ուներ ժամանակի պահանջներին համապատասխան դեկորացիոն արվեստ:

Ժամանակակիցները բարձր են գնահատել արևմտահայ թատրոնի նկարիչ Ս. Շիշեճյանին, ինչպես և Թիֆլիսում ստեղծագործող արևելահայ թատրոնի նկարիչ Ս. Աբամելիքյանին: Հ. Այվազովսկին Թեոդոսիայում իր արվեստանոցին կից մշտական դեկորներով մասնավոր թատրոն էր պահել, ուր առիթ էր ունեցել հանդես գալու նաև Պ. Ադամյանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Շիշմանյան Ռ., Բնանկարն ու հայ նկարիչները, Ե., 1958:
2. Լ. Ներսիսյան «Բնանկար» 2011
3. Ազարյան Լ. Ռ. , Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դդ. , Ե. , 1964:
4. Հայկական մանրանկարչություն, Ե. , 1967: Ավետիսյան Ա. Ն. , Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Ե. , 1971:
5. Մարտիկյան Ե. , Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք 1-2, Ե. , 1971–75:
6. Ղազարյան Մ. , Հայ կերպարվեստը XVII - XVIII դարերում, գեղանկարչություն Ե. , 1974:
7. Дурново Л. А. , Краткая история древнеармянской живописи, Е. , 1957;
8. Каменский А. А. , Зрителю о живописи, М. , 1959;
9. Измайлова Т. А. , Айвазян М. А. , Искусство Армении, М. , 1962;
10. Недошивин Г. А. , Беседы о живописи, 2 изд. , перераб. , М. , 1964;
11. «Հանրակրթության պետական չափորոշիչ», 2010 թ.
12. COMPETENCES FOR DEMOCRATIC CULTURE (CDC), ձեռնարկ, ԵԽ, 2018 թ.,
13. Բորև, Գեղագիտություն, «Հայաստան», 1982թ.:
14. Գեղագիտական դաստիարակություն «Լույս», 1975թ.:
15. Ա. Բալյան-Դպրոցականների գեղագիտական դաստիարակություն «Լույս», Երևան, 1979թ.:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

3-րդ դասարան

Դասի տեսակը - գունանկար

Դասի թեման - Խաչքարի պատկերում զարդանախշի օգտագործումով

Դասի նպատակը - 1.զարգացնել տեսողական երևակայությունը
2.բացահայտել բնության նկատմամբ մարդու վերաբերմունքը
3.գնահատել հոգևոր գեղեցկությանը
4.Գնահատել վարպետի աշխատանքը

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ

Ուսուցչի համար – դասին վերաբերող ցուցապաստառներ, գիրք, թեմային վերաբերող իրեր:

Աշակերտի համար – դասագիրք, թուղթ, սև հասարակ մատիտ, ռետին, գունավոր մատիտներ:

ԴԱՍԻ ԸՆԹԱՅՔԸ

- 1.Կազմակերպչական մաս
- 2.Զրույց թեմայի շուրջ
- 3.Աշակերտների միջոցով վեր հանել, քննարկել տվյալ թեմայի շուրջ առկա խնդիրները:
- 4.Գործնական աշխատանք՝ աշակերտներին առաջարկվում է նախքան սկսելը որոշել թղթի ճիշտ դիրքը, ճիշտ տեղադրում:
- 5.Դասի ամփոփում, ամրապնդում և գնահատում:
- 6.Դասի ավարտին կազմակերպել փոքրիկ ցուցադրում:

Դասը վարեց՝ Գայանե Դավթյանը

ԴԱՍԻ ՊԼԱՆ

5-րդ դասարան

Դասի տեսակը - գունանկար

Դասի թեման - նատյուրմորտ

Դասի նպատակը - 1.գարգացնել տեսողական երևակայությունը
2.գարգացնել հեռանկարի նկատմամբ կառուցման ձևերը
3.գարգացնել ճիշտ գունային լուծումները

4.գարգացնել սերը աշխատանքի ճիշտ կողմնորոշվելու

նկատմամբ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ

Ուսուցչի համար – դասին վերաբերող ցուցապաստառներ, գիրք, թեմային վերաբերող գրքեր,

գունավոր կավիճներ

Աշակերտի համար – դասագիրք, թուղթ, սև հասարակ մատիտ, ռետին, գունավոր մատիտներ,

գուաշ, վրձիններ

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

1.Կազմակերպչական մաս

2.Զրույց թեմայի շուրջ

3.Աշակերտների միջոցով վեր հանել, քննարկել տվյալ թեմայի շուրջ առկա խնդիրները:

4.Գործնական աշխատանք՝ աշակերտներին առաջարկվում է նախքան սկսելը որոշել թղթի

ճիշտ դիրքը, որից հետո գտնել թղթի կենտրոնը, այնուհետև սկսել աշխատանքը սև հասարակ մատիտով

5.Դասի ամփոփում, ամրապնդում և գնահատում:

6.Դասի ավարտին կազմակերպել փոքրիկ ցուցադրում:

Դասը վարեց՝ Գայանե Դավթյանը

